



## ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեռնագործների 18,

հեռ. (+374 285) 3 31 31

էլ. փոստ՝ [info@zcmc.am](mailto:info@zcmc.am)

Հաշվետվություն թիվ 01, 08.04.2020

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ (այսուհետ՝ ԶՊՄԿ) բաժնետերերի կառուցվածքում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

- 1) «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲ ընկերության և «ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ» ՍՊ ընկերության միջև կնքվել է բաժնետոսմերի առուվաճառքի և փոխանցման պայմանագիր, որով «ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ» ՍՊ ընկերությանը պատկանող ԶՊՄԿ թվով 1 649 003 հատ, 32 980 060 000 (երեսուներկու միլիարդ ինը հարյուր ութսուն միլիոն վաթսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով և ԶՊՄԿ-ի կանոնադրական կապիտալի շուրջ 60 տոկոսը կազմող բաժնետոսմերը ձեռք են բերվել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից.
- 2) «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲ ընկերության և «Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲ ընկերության միջև կնքվել է բաժնետոսմերի առուվաճառքի և փոխանցման պայմանագիր, որով «Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲ ընկերությանը պատկանող ԶՊՄԿ թվով 412 250 հատ, 8 245 000 000 (ութե միլիարդ երկու հարյուր քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով և ԶՊՄԿ-ի կանոնադրական կապիտալի շուրջ 15 տոկոսը կազմող բաժնետոսմերը ձեռք են բերվել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից.
- 3) «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲ ընկերության և գերմանական «Սի 2 Քափիթալ» ՍՊ ընկերության (C2Capital GmbH) միջև կնքվել է բաժնետոսմերի առուվաճառքի և փոխանցման պայմանագիր, որով ԶՊՄԿ թվով 343 539 հատ 6 870 780 000 (վեց միլիարդ ութ հարյուր յոթանասուն միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով և ԶՊՄԿ-ի կանոնադրական կապիտալի շուրջ 12,5 տոկոսը կազմող բաժնետոսմերը օտարվել են «Սի 2 Քափիթալ» ՍՊ ընկերությանը:

Վերը նշված գործարքների արդյուքնում, կենտրոնական դեպոզիտարիայում համապատասխան գրանցումների կատարումից հետո.

- 1) ԶՊՄԿ կանոնադրական կապիտալում «ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ» ՍՊ ընկերության մասնակցությունը դադարում է.
- 2) ԶՊՄԿ կանոնադրական կապիտալում «Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲ ընկերության մասնակցությունը դադարում է.
- 3) «Սի 2 Քափիթալ» ՍՊ ընկերությունը (C2Capital GmbH) դառնում է ԶՊՄԿ թվով 343 539 հատ 6 870 780 000 (վեց միլիարդ ութ հարյուր յոթանասուն միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով և ԶՊՄԿ-ի կանոնադրական կապիտալի շուրջ 12,5 տոկոսը կազմող բաժնետոմսերի սեփականատեր.
- 4) «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲ ընկերությանը պատկանող ԶՊՄԿ բաժնետոմսերի քանակը կազմում է 1 717 714 հատ 34 354 280 000 (երեսունչորս միլիարդ երեք հարյուր հիսունչորս միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով բաժնետոմսեր, որոնց կշիռը ԶՊՄԿ կանոնադրական կապիտալում կազմում է շուրջ 62,5 տոկոս: